



Սևծովյան երկրների հետազոտողներ համագործակցեք ցանցի միջոցով

Բարձր թողունակության ցանցը և կապը GÉANT2-ի հետ թույլ կտա Հարավկովկասյան հետազոտողներին և ուսանողներին ավելի սեղմ համագործակցել

Մարտի 3, երկուշաբթի, 2008թ., Անկարա (Թուրքիա) և Քենբրիջ (Միացյալ Թագավորություն). Սևծովյան փոխադարձ կապ (BSI) նախագիծը, որն այսօր սկսվեց, կստեղծի հարավկովկասյան երկրների միջև տարածաշրջանային հետազոտական և կրթական ցանց և այդ երկրները կմիացնի համաեվրոպական հետազոտական GÉANT2 ցանցի հետ՝ բարձր թողունակության կապի միջոցով: Այս առաջատար նախագիծը տարածաշրջանում իր տեսակով ամենամեծն է և թույլ կտա կովկասյան հետազոտական համայնքներին արդյունավետորեն մասնակցել համատեղ գիտական և կրթական գործընթացների ամբողջ Եվրոպայի հետ: Եվրոպական Հանձնաժողովն ապահովում է €1.4 մլն. ֆինանսավորում BSI-ի համար իր հետազոտությունների և զարգացման 7-րդ Շրջանակային ծրագրի ներքո:

BSI նախագիծը կմիացնի թվային բաժանումը Հարավկովկասյան ազգային հետազոտական և կրթական ցանցերի միջև, հատկապես GRENA-ի (Վրաստան), AzRENA-ի (Ադրբեջան), NAS RA-ի (ՀՀ ԳԱԱ, Հայաստան) և Եվրոպայի միջև՝ հիմնելով բարձր արագությամբ մայրուղային ցանց Հարավային Կովկասի տարածաշրջանում և միացնելով այն համաեվրոպական GÉANT2 ցանցի հետ:

Թուրքիայի ազգային հետազոտական և կրթական ցանցը, TÜBİTAK-ULAKBİM-ը, համակարգում է «Սևծովյան փոխադարձ կապ» ձեռնարկումը, որը լինելով առաջատար նախագիծ նաև խոշորագույն նախագծերից է, որը կորդինացվել է Թուրքիայի կողմից Շրջանակային ծրագրում:

«Հիմնվելով Հյուսիսարևելյան Եվրոպայում նվաճած գերազանց արդյունքների վրա, BSI նախագիծը ձգտում է կրճատել թվային բաժանումը Սև ծովը շրջապատող երկրների և Եվրոպայի միջև», ասաց Վիվիան Ռեդինգը՝ Տեղեկատվական հասարակության և լրատվամիջոցների գծով Եվրոմիության լիազորված անձը: «Մեր աջակցությունը ցանցի ինֆրակառուցվածքի հետազոտմանը ոչ միայն հեշտացնում է գիտնականների համագործակցությունը գլոբալ մասշտաբով, այլ նաև մատակարարում է մուտքը դեպի ժամանակակից online ծառայություններ, որոնք ունեն կարևոր ազդեցություն այնպիսի ոլորտների վրա, ինչպիսիք են բժշկությունը, կրթությունը և օդերևութաբանությունը: Սրանք զգալի օգուտներ են և՛ հետազոտողների, և՛ ամբողջ բնակչության համար»:

Հարավային Կովկասի փոխկապակցվածությունը տարածաշրջանային մայրուղային ցանցի միջոցով և բարձր արագության կապը GÉANT2-ի և Եվրոպայի հետ հնարավորություն են տալիս ներմուծել նոր ծառայություններ տարածաշրջան և հանդիսանում են կարևոր քայլ դեպի Կովկասի գիտական ներուժի ինտեգրումը Եվրոպայի և ամբողջ աշխարհի հետ: Այն կկրճատի ցանցային բաժանումը հարավկովկասյան երկրների և Եվրոպայի միջև՝ հնարավորություն տալով մեծացնել համագործակցությունը գիտական նախագծերում ամբողջ աշխարհով մեկ:

Սևծովյան փոխադարձ կապն անգնահատելի հնարավորություն է տալիս իրականացնելու Սևծովյա տնտեսական համագործակցության (BSEC) նպատակները: Այն կօգնի BSEC-ին կենտրոնացնել տարածաշրջանային գիտական և տեխնիկական համագործակցության ուղղությունները՝ տարածվելով լավագույն գործողությունները, նախաձեռնելով համատեղ

ընդհանուր հետաքրքրության նախագծեր բոլոր անդամ երկրների և նախատեսվելով համագործակցությունները BSEC-ի անդամ երկրների և այլ կազմակերպությունների միջև, մասնավորապես Եվրամիության հետ զարգացած GÉANT2 ցանցի միջոցով:

«Սևծովյան փոխադարձ կապը ոչ միայն ինտեգրում և կապում է հարավկովկասյան հետազոտական և կրթական համայնքները Եվրոպայի հետ, այլ նաև կատարում է մոդելի դեր, որպեսզի ընդլայնի իր ձեռքբերումների շրջանակները ամբողջ Սևծովյա տարածաշրջանով դեպի Կենտրոնական Ասիա՝ ներկայացնելով էական միջտարածաշրջանային տարրեր», – ասաց պրոֆ. դոկտոր Քեմ Սարաքը՝ TÜBİTAK-ULAKBİM-ի տնօրենը: «Սա նախկին "Silk Route"-ը կփոխակերպի ժամանակակից "e-Silk Route"-ի՝ իրականացնելով ցանցը, որն ապահովված է բարձր թողունակության կապով:

Սևծովյան փոխադարձ կապ նախագիծը գործում է 24 ամիս՝ սկսած 2008 թ. մարտի 1-ից: Նախատեսվում է, որ Տարածաշրջանային ցանցը և կապը GÉANT2-ի հետ կիրագործվի մինչև 2008 թ. վերջը:

TÜBİTAK-ULAKBİM-ի մասին

TÜBİTAK-ULAKBİM-ը աշխատեցնում է Թուրքիայի Ազգային հետազոտական և կրթական ցանցը (ULAKNET), որը մատակարարում է Թուրքիայի ակադեմիական և հետազոտական համայնքների ցանցը: ULAKNET-ը միավորում է մոտավորապես 90,000-ոց ակադեմիական անձնակազմին և ավելի քան 2 մլն ուսանողների իրար հետ և այլ աշխարհի գիտակրթական ցանցերի հետ: ULAKNET-ը փորձում է միացնել բոլոր օգտվողներին ամենաբարձր հնարավոր թողունակությամբ տեխնոլոգիայով 1 գիգաբիթ վայրկյանում կապուղով և ունի STM-4 կապուղիներ դեպի Եվրոպական ակադեմիական ցանց GÉANT2, որը 2008 թ. կեսերին կբարձրացնի իր թողունակությունը մինչև 5 գիգաբիթ վայրկյանում: ULAKNET-ի միջոցով, ULAKBİM-ը ղեկավարում և կորդինացնում է անկախ հետազոտական կազմակերպությունների զուգահեռ հաշվարկների ոլորտը ինչպես Թուրքիայում TR-Grid Ազգային նախաձեռնության շրջանակներում, այնպես էլ լինելով անդամ Եվրոպական Հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող նախագծերի, ինչպիսիք են EGEE-ն և SEE-GRID-ը: Ազգային շրջանակներում ULAKBİM-ը նաև ղեկավարում է հետազոտական և զարգացման գործընթացները ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտում Ulak-CSIRT ցանցային անվտանգության և IPv6 Task Force-ի ծրագրերի միջոցով:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.ulakbim.gov.tr/eng

GÉANT2-ի մասին

GÉANT2 առաջադեմ համաեվրոպական մայրուղային ցանց է, որը փոխկապակցում է ազգային հետազոտական և կրթական ցանցերը Եվրոպայի շրջանակներում:

Սոտ 30 միլիոն հետազոտական և կրթական սպառողներ մայրցամաքի 34 երկրներում կապված են ազգային հետազոտական և կրթական ցանցերի միջոցով: GÉANT2 առաջարկում է անփոխարինելի աշխարհագրական ծածկույթ, բարձր թողունակություն, նորարարական խառնուրդի ցանցային տեխնոլոգիաներ և սպառողին կենտրոնացված ծառայություններ՝ դարձնելով այն աշխարհի ամենաառաջադեմ միջազգային ցանց:

Հետազոտական և կրթական ցանցերի հետ համատեղ GÉANT2 ունի ավելի քան 50 հազար կմ երկարության կապուղիներ, և նրա լայն աշխարհագրական սփռվածությունը հնարավորություն է տալիս միանալու ուրիշ երկրների ցանցերին՝ թույլ տալով կատարել գլոբալ հետազոտություններ: Եվրոպայի ուսանողները և հետազոտողները կարող են օգտագործել GÉANT2 երկու կեսերի միջև առանձնաված կապուղիներ, ստեղծելով օպտիկական փակ ցանցեր, որոնք միացնում են առանձնահատուկ հետազոտական կենտրոններ:

GÉANT2-ը ֆինանսավորվում է Եվրոպական Հանձնաժողովի կողմից Եվրամիության վեցերորդ Հետազոտական և զարգացման Շրջանակային ծրագրով: Նախագծի մասնակիցներն են 30 Եվրոպական ազգային հետազոտական և կրթական ցանցերը, TERENA-ն և DANTE-ն: GÉANT2-ը աշխատում է DANTE-ի միջոցով Եվրոպայի հետազոտական և կրթական ցանցերի անունից:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.GEANT2.net